

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի Մուսալեռ համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-5/ համայնքային ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

Աշխատակազմի առաջատար մասնագետը.

- 1) Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հարկային և ոչ հարկային եկամուտների տեղեկատվական տվյալների շտեմարանի հետ կապված աշխատանքները,
- 2) Իրականացնում է համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի հետ կապված աշխատանքները,
- 3) Ապահովում է իր կողմից սպասարկվող տեխնիկայի բնականոն և անխափան աշխատանքը,
- 4) Պատասխանատվություն է կրում համակարգչային մուտքագրմամբ համայնքապետարանից ելքագրվող ծառայողական գաղտնիք պարունակող փաստաթղթերի գաղտնիության ապահովման համար,
- 5) Հետևում է աշխատակազմի քարտուղարի հանձնարարականների համապատասխան ժամկետներում կատարման ընթացքին, որոնց արդյունքների մասին զեկուցում է աշխատակազմի քարտուղարին,
- 6) Իրականացնում է խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ սահմանված խնամակալության և հոգաբարձության մարմինների գործառույթները:

Աշխատակազմի առաջատար մասնագետն ունի պաշտոնի անձնագրով սահմանված այլ իրավունքներ ու պարտականություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է

- 1) առնվազն միջնակարգ կրթություն
- 2) իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն,
- 3) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2016 թվականի նոյեմբերի 25-ին՝ ժամը 11.00-ին՝ Մուսալեռի համայնքապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները Մուսալեռի համայնքապետարանի աշխատակազմ կամ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

-Դիմում մրցութային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/

-տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակների հետ միասին.

-հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1801-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.

-հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

-արական սեռի անձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենները.

-մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

-անձնագրի պատճեն:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Մուսալեռի համայնքապետարան կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն /հասցե՝ ք. Արմավիր, Խ. Աբովյան 71, հեռ. 0237 2 07 70, 0237 2 76 49/:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10.00-ից 16.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2016 թվականի նոյեմբերի 7-ը:

Հեռ.՝ 0231 6 47 22

Էլ. փոստ՝ musaler.armavir@mta.gov.am

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Մուսալեռ, Շառլ-Տիրան Թեքեյան 2/1